

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՈՒՀԻՐԷ, ՍԿԱՐԻՆ ԳՈՐԾ

ՄՈՒԿԱԹԹԱՄԻ ՃԻՅՑ ՊԻՄՍԵ

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈԹՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄ

ՄԵԿ անգլա-ի համար տողը 3 ՂՐՁ. ողջ.
ՄԵԿ անգլա-ի անգլի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿԱՆ ԶԱՄԱՐ

Տարեկան ՂՐՁ. ողջ 100
Վեցամսեայ » 50
Եռամսեայ » 30

ՕՏԻՐ ԵՐԵՎԱՆԻ ԶԱՄԱՐ

Տարեկան ՁՐ. 26
Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՋՈՒՄ

ՄՈՒԿԱԹԹԱՄԻ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳԵՄԱՐԻ ԵՒ ՇԱՐՔԻ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՂՔԻՄԻ

ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

(Շարունակութիւն ժողովրդական թղթէն)

Մեր գաղութները դարձան կերպով
և հիմնապէս բարեկարգելու համար
ամեն բանէ առաջ ուշադրութեան
առնելու է այդ փոփոխութեան,
խարխուլ, անճոճի, հակառուջական
չէնքը որուն ամեն մէկ անկիւնէն, ան
մէկ ծակոտիքներէն յուսահատու-
թիւն կը թորէ, որուն սեմէն ներս
մտած ժամանակը վրադ թուլութիւն
մը, վհատութիւն մը և զղումը մը
կուգայ. այդ չէնքը, կ'ըսեմ, որ հի-
մէն մինչև տանիքը կործանում կ'ըս-
պառնայ, որ երկար տարիներէ ի վեր
կործանումի մասնուած, գոգցես
հրաշքով ոտքի վրայ կը շարունակէ
կենալ, և որ մեր վարիչներու անգութ
և անհրեղի մէկ անփութութեան
հետեանք մեր ազգային արժանա-
պատուութեան վարկը կը բեկանէ.
այդ չէնքը՝ գոյութեան իրաւունք չու-
նի, պէտք է հիմնադրական ընել, մէջ
տեղէն վերցնել, եթէ մեր ազգայնեան
բով քիչիկ մը խղճի խայթ, քիչիկ
մը ազգային զգացում և քիչիկ մը
գութ ներքին ըլլայ փոփոխութիւն:

Ժամ մը շինած պիտի ըլլայ ան՝
որ այդ գաղութը պիտի փոխէ:
Այնպիսի մը այդ չէնքին վրայ
— որուն գաղութ անունը կը տրուի
հեգեթիք — բաւական պիտի ըլլայ գա-
ղափար մը տալու այն գործընդուն-
քին վրայ՝ որով մեր վարիչները խը-
նամած են ազգին ամենէն կարեւոր և
ամենէն նուիրական մէկ հասարակու-
թիւնը:

Մեր տղաքը, մեր զաւակները դա-
տապարտուած են իրենց ամենէն
թաւրտարիները, իրենց են critique
տարիքը անցնել այդ չէնքին մէջ որ
պարզապէս էջէջ մըն է ըսելու ըս-
տիպուած ենք, տեղական բառ մը
գործածելու համար:

Ազգային վարժարան մը ըլլալը
պատճառ մը չէ որ անոքի մը չափ
խակ խնամք չի տարուի վրան:

Առողջապահութեան տեսակէտով,
Գալստիան վարժարանը՝ միերորայի
միջերանոց մը և հիւանդութիւններու
ապաստանարան մըն է լոկ:

Լոյսէ, օդէ և արեւէ զուրկ, խոնա-
ւութիւն և վարչահոտութիւն իրենց

նեխիչ դերը կը կատարեն հոն և ոչ
որի մտքէն անցած է թէ՛ այդ մըթ-
նոյրտին մէջ գեղափոխութիւն, մատղաշ,
փետուրի պէս փափուկ մանուկները
օրն ի բուն բնակելու դատապարտ-
ուած են:

Որովհետեւ հոն յաճախող տղաք-
ները ընդհանրապէս աղքատ ծնողաց
զաւակներ են, կարծես կ'արգելուի
անոնց՝ կարմիր այտեր և առողջ կազ-
մուածք մը ունենալու իրաւունքը:

Գաղութին այս վիճակը, ներթափա-
նը սոսկ, բաւական է ներելու հա-
մար մեղի որ մեր ամբողջ գաղութը
և նոյնպէս նեխեալ երեսնուն ի վեր
այդ ազգայնեան՝ որոնք զուրկ են այս
քաւանքորդ դարուն մէջ, ոչ թէ ման-
կավարժական՝ այլ նոյն իսկ տարրա-
կան ամենապարզ սկզբունքներէն:

Եւ երեսփոխաններ, Գաղութեան
ժողովոյ անդամներ, Հոգաբարձու-
ներ եղած են այս պատուարժան ma-
nequinները:

Ան՝ որ եկեղեցւոյ մէջ վարձու թիկ-
նաթոռներ և գերեզմանատան մէջ
մեկնիչ փոսեր ստեղծելու գաղափա-
րը յղացաւ, ան՝ որ տուրքի դրու-
թիւնը հիմնեց, ամուսնութիւններու և
մկրտութիւններու սակագինը մէջտեղ
դրաւ, ան՝ որ վաւերացման, թաղա-
մանութեան, քրտնիքի, վկայութեան
և չեմ գիտեր ինչի քաւիճանքը վը-
զերնուս անցուց և որ այսօր մէկ
կողմ քաշուած՝ իր այս սքանչելի հը-
նարագիտութեան վրայ կը պարծե-
նայ, քառակուսի անիւ մը հնարողի
յաւակնութեամբ, իր բոլոր շին-
ծու ազգասիրութեամբը և կարծեցիկ
տնտեսագիտութեամբը, ինչո՞ւ վայր-
կեան մըն ալ իր ուշադրութիւնը չէ
դարձուցեր արդեօք մեր գաղութներուն
վրայ որոնք սակայն մեր կեանքը
պատրաստելու սահմանուած են, մինչ-
դեռ անդին իր ամբողջ ոյժը թափած
է Մարմինայի վրայ ուր մեր ոսկոր-
ները պիտի հանգչին:

Մարդ խորհրդական ըլլալէ ետքը
ասանկ ըլլալու է:

Եւ այս պատուական ազգայինը
արտասովոր նիստերու առնել, կնճառոտ
խնդիրներու միջոցին, խեղճ չի հաս-
նելիք. գործերու համար միայն կը
թոյլատրէ որ մերձեան և խորհուրդ
հարցնեն իրեն:

Ալ միւսները մտքերնիդ բերէք,
ինչ հանճարեղ գլուխներ ըլլալու են:
Մեր վարիչները մօրուի աչքով
նայած են միշտ վարժարաններուն
վրայ և անոնց համար ծախսուած
գումարները ինքեւս դրամ՝ մը նկա-
տած են:

Եւ ազգը՝ անբացատրելի անտա-
րբութեամբ մը թող տուած է որ
տարիները իրարու յաջորդեն՝ իրենց
աւերիչ փոշին ձգելով միայն մեր ա-
մենէն պիտանի և սիրական յարկին
վրայ ուրկէ սակայն պէտք էր որ
լոյս և կեանք դուրս գար:

Յ. Ա.

(Շարունակելի)

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԳԱՂԱԿԱՆՆԵՐԸ

Կովկասի մէջ ապաստանած 40,000
հայ գաղթականներու հարցը որ 1893էն
ի վեր առկա կը լիար, վերջապէս լուծ-
ուած է Ռուսիոյ Նախարարաց խորհրդէն՝
կայսերական հրամանի մը համեմատ: Գաղ-
թականներուն նախ պիտի առաջարկուի վե-
րագաւազ իրենց հայրենի երկրէն՝ Թրքա-
հայաստան՝ որոնք անշուշտ պիտի մերժեն
ընդունիլ այս առաջարկը: Ապա պիտի պատ-
ուիրեն տեղական իշխանութիւններուն և
այնպէս գիւղերու ու գաւառակներու պետե-
րուն՝ որ Հայերը հաստատուած են ան-
ցիալ ութը տարիներէ ի վեր, արձանագրել
այս վերջինները իբր ռուսական հպատակ:
Եթէ տեղական իշխանութիւնները կամ քա-
ղաքականները մերժեն Հայ ապաստանեա-
լիքը ընդունիլ բնիկներու հետ միեւնոյն հա-
ւասարութեան մէջ — ինչպէս իրաւունք ու-
նին այդպէս ընելու — այն ատեն Հայե-
րուն արտօնութիւն պիտի տրուի անշուշտ
և անկախ բնակչութիւն մը հաստատել Սը-
քայական հողերուն վրայ: Հայերը պիտի
ըլլան ռուսական հպատակներ ու պիտի վա-
յելին աւաններու համար հաստատուած բո-
լոր կանոնաւոր քաղաքական իրաւունքները:
Սակայն չպիտի արտօնուին հողային ստաց-
ուածքներ ունենալ, բացի վարձու տրուած
կայսաւաններէն, յաջորդ տասը տարիներու
համար:

Գաղթականութեան երիտասարդ անդա-
մները իբր ռուսական հպատակ իրենց եր-
զումը ընելէն վերջ, իսկոյն զինուորական ծա-
ռայութեան պիտի կոչուին: Այս ամենը ի
նկատի առնելով՝ կառավարութեան կողմէ
եղածը՝ անվճար կարգադրութիւն մը չէ՝
թէ և իր շահերն խորհուած են սակայն չէ

մտնուած նաև գաղթականութեան իրաւ-
ունքները: Կարելի չէ հաւատալ թէ այդ
գաղթականները ուղեն վերագաւազ իրենց
հայրենի երկրէն: Կովկաս գաւառող հայ
գաղթականներուն ժամանակ տրուած է մին-
չեւ 1902 փետրուար մէկ՝ ընդունիլ վերջին
կարգադրութեան այս կամ այն ձևը:

ԳՐԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

"ՀՈՒՅԵՐ" Զեղիցականութիւն ՎԱՆ թէ՛ ՔԵՆԱՆԻ

Բարեկ, Լիւքսեմպուրի պարտէզը:
Նուագահանդէսին վերջին հնչիւնները տե-
ղի տուած էին տերեւներուն խորունկ մեղեդի-
ներուն: Վայրկեան մը առաջ բեմին շուրջը
խոնուած բազմութիւնը՝ հիմա անօտարցած,
ցրուուած էր: Ունեց գին կը յաճնային նըս-
տարաններուն վրայ, և մերթ ընդ մերթ
ընթացքով մը խոփիչ ֆրոնթրուն ծառու-
ղի մը երկայնքը՝ երաժշտութեան կտոր
մը կը թուէր հովէն գետ չի տարադնած:
Արեւ իր ճառագայթները կ'ամփոփէր և ի-
րիկունը՝ կ'ապոյտ ու թափանցիկ, ճիւղերէն
վար կը թափփիր:

Քանի մը հոգի, ամենքս ալ վշտի մը
շղարշը ճակատնուս, ծառի մը տակ նստած
էինք այդ պահուն յորում վերջապէս մէջ
կը թեւաթելն երազներու և անշնանքներու
միջանկոյն հոգեր: Յանկարծ, մէջքնուս
մին, նկար մը հանեց զրպանէն որ ձեռքէ
ձեռք կը պտտուի գետ մամուլին տակ գըս-
նուող երկի մը գաղտնապահութեամբ: Նը-
կարը խորհրդանշանական էր. կը ներկա-
յացնէր երիտասարդ մը որ իր ծանրահոգ
ճակատը կը վերցնէր դէպի լուսինը: Գրքի
մը կափարիչն էր որ պիտի պարունակէր
արտում նըզեր, գուցէ՝ տապաւնաբարձ էր
միտած Սերի մը: Նկարին տակը կը կար-
գացուէր գրքին և հեղինակին անունը «Հա-
գեր, վահան թէ՛ քեանի»:

Չէի ճանչնար նոր բանաստեղծը որ վա-
ղը հրապարակ պիտի ելլէր և իր անունը
մարքիս մէջ անորոշ հետք մը ձգած էր,
երբ վերջերս ձեռքս անցաւ իր հատորը:
Կափարիչը փոխուած էր ու անիւ պարզ
ոճ մը ստացած. հեղինակը պարզած էր
տարապէս զոք իր բարեկամները ձեռք էին
բը առնիկներն համար:

Թէ՛ քեանի հատորը կը բաղկանայ ուսա-
նաւոր և արձակ բանաստեղծութիւններէ ո-
րոնք բոլորն ալ կ'երգեն Սէրը առաջին
Սէրը, խափուա Սէրը, անխիթական տեն-
ջանքի մը բոլոր հրապարակ ու խափուա-
թիւններովը: Ինչ որ ամեն բանէ առաջ

Գ. Է. ՄԷԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՑՆԵՐՈՒ

աչքի կը զարնէ այս երգերուն մէջ՝ բա-
նասեղծական խառնուածքն է որով օծա-
ւած ըլլալ կը թուի ռեքեթական։ Սկզբնա-
կէնքէ վայելումը չէ, մինչև յաջողութիւն
Գալարուած է Տենչանքին՝ Գեղեցկութեան
ոտքը, Սրտին խունկն է որ կը բարձրանայ
գեղի պաշտեցեալ էակը, շրթունքներուն
անխնայական Համայնքն է որ կը սլանայ
«Համայնքերու մարմինն մէջ լոյս հագին»։
Բայց երբեք Տենչանքը կը մարմնաւորի և
պէտքը կ'զգայ երկար գգոտանքներով և ա-
զաչանքով ողբերգու զԱյն։

Երբեք պէտք է փափաքը՝ սկի
ինչպէս ճառագայթ՝ բայց երբեք, երբեք
Ձրլայ օր Մաթին սահմանէն ելլէր,
Ձրլամարեցընէ վարդն որ կը ծաղկի
Ձեր աչուրներուն մէջ ամեն օր նոր...
Ի՞նչէր անոր հետ փոփ մը մէջ խոր։

Վահան Թէքէեան ուրիշ կարևոր յատ-
կութիւն մը ունի, նկարեղ գրիչ մը։ Պատ-
կերները կը վկայեն երբեք մար և յաճախ
յիշեցնելով արարական հեքիաթներ։ Յաւա-
րէ է օսելով որ այս ոտանաւորներուն լու-
րօքն ալ ձեռն չի հաւատարի իրենց պա-
րունակած զգացումին ներուժնան ու ազ-
նուութեանը։ Տաղաչափութիւնը յաճախ աղ-
կար է. տաղերը յղկուած ու ներդաշնակ
չեն և ոտեղ կը մեղանշեն տաղաչափական
հիմնական օրէնքներուն դէմ։ Ստորեկ կը
գնենք սակայն ոտանաւորներէն մին որունը
թէ արուեստական և թէ բանաստեղծական
տեսակետով յաջողած են։

ԿԱՆԹԵՂԸ

Իմ սրտիս մէջ՝ բերեղ կանթեղ՝
Ներուշեցաւ բոցը սիրոյդ
Եւ կանթեղին մէջ, իրի տեղ,
Հօսեցուցի կեանքս, պուտ պուտ։

Հոն՝ խորանին մէջ հոգիս՝
Ժամանակէ մ'ի վեր անյուշ,
Գամուած է բոյ, մ'զ պաշտեցիս,
Քու ոտեղեղի պատկերդ անուշ։

Այդ պատկերին առջև ահա
Որ հրեշտակի մ'օտնի անսուն,
Միտոյ կանթեղը կը մըխայ
Բոցով մը փոքր ու պղտուն։

* *

Իմ մարմինիս թաց բազումըն
Քամուած կեանքը երբոր ցամքի
Միտոյ կանթեղն ալ այն ատեն,
Լոկ այն ատեն մարի՛ պիտի։

Վահան Թէքէեան, ինչպէս ինքն ալ կ'ը-
սէ, իր քնարին մէկ լարը միայն հնչեցուց,

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (24)

ԺԸՂԱՆ ՏԻՎՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇԵՂՈՒԱԾ ՎԷՊ

ԳՈՒԽԵ

Նայն իսկ առաւելութիւնը շատ հեռու
ապագայի մը մէջ կ'երևի իրեն, նոյն իսկ
շատ անհասանալի և այն ժամանակ միայն
երբ բոլոր իրեն մարդիկը տեղաւորէին ու
գիրք մը ունենային։

Միթէ ինքը ընտանիքի տէր չէր...
բազմահոգ ընտանիքի մը, սրուն պարտա-
կան էր ինքզինքը, որուն նախախնայութիւնը
և նեցուկն էր։ Իրեն այնպէս կը թուէր որ
երջանակութիւնը իրեն համար այն օրէն

Սիրոյ լարը։ Կեանքը չէ ազդեր որ այդ լա-
րը գուարժ ձայններ արձակէր. իր երգերը
տարտամ շեշտ մը ունին։ Բայց լարը խղ-
ւած չէ և բանաստեղծին մատները զեռ
յաճախ պիտի վերադառնան անշուշտ անոր
վրայ։ Մաթին է որ այսուհետև նուազ
մեղամաղձատ և աւելի ներդաշնակօրէն հըն-
չէ ա՛ն։

ԲԱՐԻՉՅԻ

ՄԻՏԻԼԼԻ

Օրուան քաղաքական մէկ կարևոր դէպ-
քին թափաբախտը եղող այդ կողմէ՛ն՝ այն-
քան խօսեցնել կուտայ իր վրայ շարժել մը
ի վեր՝ որ աւելորդ չենք համարի բանի
մը կարևոր ծանօթութիւններ տալ իր մա-
սին, փոքրիկ գոհացում մը տալու համար
հետաքրքիր ընթերցողներու մէկ փափաքին։

Միտիլի՛ որ պատմութեան մէջ Լէօպոս
անունով ծանօթ է, Արշակեղապետի մէջ՝ ա-
սիական թուրքիցի եղբայրներուն մօտ գըա-
նուող կողմէն է։ Իր երկարութիւնն է 71
հազարամէթը և լայնքը 44։ Բնակչւորն
թիւն է 80էն 90 հազար։

Ռազմագիտական տեսակետով Միտիլի
խիտ կարևոր կողմէն է։ Նաւահանգիս-
տը որ հիմնադրի կերպով պատմապարտած է
կարող է իր ծոցին մէջ տեղ տալ ամբողջ
նաւատորմի մը։ Եւրոպական տերութիւն մը
եթէ ձեռք անցնէր Միտիլին՝ անհաշուելի
զօրութեան մը տէր պիտի ըլլար որովհե-
տեւ այդ կողմէն՝ իրեն ռազմագիտական դիրք
սքանչելի է քանի որ Եւրոպայի և Ասիոյ
մէջ տեղը կը գտնուի, Իզմիրի մօտիկ, քիչ
հեռու Բիթլէ և Սիւանիկէ, և որ աւելին է,
ճիշտ Տարտանէնքու բերինի գէմը կը գըա-
նուի։ Բայց իրեն վաճառաշահ երկիր որն է
կարևորութենէ զուրկ է։

Հարաւային նաւահանգիստը որ մինչև 700
տակառաչով տարօրութիւն ունեցող շոգե-
նաւեր կրնայ ապաստանել, նաւարկութեան
համար խիտ ապահով ծոց մըն է։ Վճիռի
տարուան մէջ հետեւել շարժումը հաշուած
է։ Ամբողջ տարուան մէջ 1,324 շոգենաւ
մատն է 596,106 տակառաչով բեռով և
3,042 առագաստանաւ՝ 38,148 տակառա-
չով տարօրութեամբ։

Կղզիին զխաւօր բերքերն են արմաթը,
թուզ և չամիչ որ հազիւ տեղական սպառ-
ման կը բաւեն։

Պաշտօնական վիճակագրութեան մը կը
տեսնուի որ կղզւոյն տարեկան ներածութեան
գումարն է 7 միլիոն ֆրանք և արտածու-
թեանը 6 միլիոն, գումար մը՝ որուն 5 1/2
միլիոնը փոխաբեղն է արտածուած ձէթին
և օճաքին։

Միայն պիտի սկսէր երբ իրենները զայն
ձեռք բերած պիտի ըլլային, և իր զոհա-
բերութիւնը, իր բոլոր շնորհներէն և բո-
լոր ազատութիւններէն այս հրաժարումը
բաղդը կը թուէր իրեն։

Բնաւ չէր ցաւիլ այն բաներուն վրայ
զոր թերեւ կը թողոր իր հոտին, գէպտիկ
կ'երթար իր ճամբէն, առանց տկարութեան
և առանց զարմանքի, փոխարէն ուրիշ բան
չխնդրելով աննշմէ որոց զոհած էր իր կեան-
քը՝ բայց միայն քիչ մը ներդաշնակութիւն
և սէր։

Վերջէն, եթէ տուն տեղ մը ունենալու
այդ երջանկութիւնը իրեն մերժուէր, ինչ
ընէր, միթէ պղտիկ ըլլար չկային... Ժեր-
մէն որդեգրող հանի կ'ըլլար, ինչպէս որ
մայր եղած էր՝ անձնութեան և խանդա-
ղաւորութեան միակ օրէնքին համաձայն։

Ինչպէս կը տեսնուի, եթէ Ֆրանսան ի-
րաւի սպասէր որ կղզիին մարտերն ձեռք
բերէ իր պահանջած գումարները, տարի-
ներ և տարիներ մարտանաւերը խառնած
պիտի մնային Միտիլի ծովախորշին մէջ։
Միտիլիի մէջ ծնած է Սաֆօ — պատ-
մական ֆոֆօրը — և 1462էն ի վեր է որ
այդ կղզին Օսմանեան պետութեան կը պատ-
կանի։ Մուհամմէտ Բ ի կողմէ առնուած է
վենետիկեան իշխանութեան պատկանող կա-
թոլիկների ձեռքէն։

ՖՐԱՆՔՈ-ԹՐԲԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՊԸ ԲԱՐԻՉԵԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ԿԱՐԴԻՐԸ

Ֆրանքո-թրքական միջադէպին ստացած
ծանր կերպարանքը լուրջ տեսութիւններու
տեղի կուտայ բարդեան մեծուկին։ Երկու
Ֆրանսահայապատկաններու գրաւական պա-
հանջները կարգադրելու համար ֆրանսական
կառավարութեան ձեռք առած ռազմական
միջոցները քիչ մը տարօրինակ կը թուին մա-
մուլին ներկայացուցիչներէն ոմանց, Նուային
այս ցոյցը կրնայ անհրաժեշտ դարձնել
ցամաքին վրայ զինուորական շարժում մը։
Ֆրանսան պատրաստ է պատերազմը ըս-
կըսելու եթէ նաւային ցոյցը բաւական չըլ-
լայ ստիպելու Բ. Դուռը իր բոլոր պահան-
ջներուն գոհացում տալու։ Տաճկաստանի
զինուորական կազմակերպութիւնը որքան որ
ալ թերի ըլլայ, Ֆրանսան լուրջ դժուարու-
թիւններու կրնայ հանդիպիլ Միտիլիի մէջ
ուր Սիւանիկի և Իզմիրի բանակներուն հրա-
մանատարները կրնան պետք եղած քանու-
կութեամբ զօրք և ռազմամթերք հանել։

Ինչ որ ալ ըլլան սակայն այն դժուարու-
թիւնները որոնց կրնայ հանդիպիլ Ֆրան-
սան, մամուլը արգիւք չպիտի ըլլայ կառա-
վարութեան իր շարժումներուն մէջ, բայց
կը հարցուի թէ խորհրդարանը վստահ է
թէ Տաճկաստան ինքն ալ պատերազմ չի
փնտրի իրեն թեկնածու ունենալով Ֆրան-
սայի թշնամի պետութիւն մը որ առիթը
կը փնտռէ դէմ առ դէմ գտնուելու անոր
հետ։

Այս պարագային մէջ վալտէր Ռուսօ և իր
պաշտօնակիցները ծանր պատասխանատու-
թիւններու կ'ենթարկուին։ Ժողովուրդը որ
կը գովէ ազգակիցներու արդար իրա-
ւունքները և Ֆրանսայի անունը պաշտպա-
նելու եռանդներն անաշուտ պիտի ըլլար ի-
րենց գէմ եթէ զինքը դրած ըլլային այն-
պիսի ձեռնարկի մը մէջ որուն բոլոր հետե-

ւանքները մաթեմատիքապէս հաշուի առ-
նուած չըլլային։

«Բաթրի» ուրիշ գոյնի տակ կը ներկա-
յացնէ ժողովրդին աչքին Ֆրանքո-թրքական
միջադէպը։ Երկու ֆրանսացիներուն Սուլ-
թանէն ունեցած գրաւական պահանջը
կարգադրելու պատրուակով ֆրանսական նա-
ւախուժի մը, Չարին հրաժեշտէն անմիջա-
պէս ետքը, արևելեան շուրթը մեկնելը,
իրեն համար աւելի բարձր նշանակութիւն
մը ունի։ Կառավարութիւնը անհաստական
առաւել կամ նուազ կարևոր շահեր պաշտ-
պանելու համար, չկրնար դիմած լլլալ նա-
ւային ցոյցի մը որ թնդանօթի հարուած-
ներով կրնայ վերջանալ։ Տեսակ մը խորհրդով
շրջապատուած է Ֆրանսայի այս քայլը։
Արևելեան ինչպիսի է որ կ'սպառնայ ամբող-
ջովին վերականգնել։ Առ այժմ Ֆրանսան
այնպիսի դիրքի մէջ կը գտնուի որուն հե-
տեանքները կարելի չէ գուշակել, և ոչ ոք
գիտէ թէ Պ. Տէքէսէն թակարդի մը մէջ
չէ բնուած։

Եթէ Տաճկաստան ուրիշ պետութիւն մը
չունենար իրեն թիկունք, մինչև հիմա ըն-
դունած պիտի ըլլար Ֆրանսայի պայման-
ները։ Պատահեցաւ ինչ որ դիւրին էր գու-
շակել։ Ֆրանսան գրաւեց Միտիլին։ Վաղը
Անգլիան իրեն օրինակին կրնայ հետևել։ Եւ
ո՛վ է որ ծովակը ինչպէս պիտի ըլլայ, Ֆրանսան
— եթէ Պ. Տէքէսէն Ռուսիոյ
հետ համաձայնութեամբ չուղէ առիթէն օգ-
տուել հոգաւոր Արևելեան ինչպիսի լուծելու
համար։

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Անցեալ կիրակի օր 3 նոյեմբեր, Առա-
նայէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ նոյն
օրը Առաւելի մէջ ընտրողական ժողովը
նիստ ընելով ընտրելեաց վեցանուն ցանկ
մը բուհարկած է որուն զուտը կը գտնուի
Սահակ Եպիսկոպոս Խապանան որ 51
քուէ ստացած է։

Միւս ընտրելիներն են։
Օրմանեան Պատրիարք.
Գեորգ Եպ. Երեցեան.
Վահրամ » Մանուկ.
Հայկակ » Դիմաքեան.
Գրիգորիս » Յովհաննէսեան.
— Կ'իմանանք թէ Գահլէի ազգայիններէն
մաս մը, ընդհանրապէս զարդապան տղաք-
ներ ունեցող ծնողներէ բաղկացած, հաս-
րազրութիւն մը պիտի ներկայացնէ յա-

Բրէնքը և իր ընտանիքը քանի մը շարժ
հոն բնակելու քմահաճոյքը ունենային. բայց,
Եփրատի մէջ բաւական յաճախեղ եղող
անհողութեամբ մը, սկզբնական կահաւոր-
ման համար ահագին գումարներ ծախսել
վերջը, շինուածին ծրագրը մէկդի թողուած
էր, և վերին երկու յարկերը, խոհանոցնե-
րը, ետեի մասերը դատարկ ու թափուր կը
մնային՝ միմիայն ճերմակ ծեփուած պատե-
րուն տխրատեսիլ վիճակին մէջ։

Առաջին յարկին մէկ սենեակին մէջ կը
նշմարուէին դեռ նկարներու առաջին խաւի
մը հետքերը, որուն վրայ որմանկարներ
պիտի գրուէին, բայց վեցելը, տեսնելով որ
բրէնքը հոգ չէր ընէր, աւելորդ ծախսերէ
հրաժարած էր, ու փոփոքր գոցուելով
և զոնքը գոցուելով, այդ հաստաճն ալ
միւս յարկաբաժիններուն անուց վիճակին
մէջ ինչպէս էր վերստին։

Գ. Ե. Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ
ԳԶՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԷՎԻՔԻՑԻ — ԳԼԽԱԻՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԿԻՆ ՋԱԲԻՑԻՑԻ ԵՒՆԻՐԸ

առջիկայ ուրբաթ օր գումարելի Ընդհանուր ժողովին, խնդրելու համար Ն. Վ. Տիգրան փաշայի որ ազդու միջոցներ ձեռք առնուին ազգային ինչ ինչ խնդիրներ վերջնականապես կարգադրելու համար:

—Քաղաքիս ծանօթ փաստարաններն Յակոբ էֆ. Ասատուրեան օր Գահիրե հաստատուած օրէն իսկ արտօնուած էր խառն Դատարաններու վճարելի ատենին առջև դատեր ներկայացնելու, ամսոյս սկիզբէն ի վեր մասնաւոր արտօնութիւն առած է փաստարաններու նոյնպէս Տեղական Դատարաններու վճարելի ատենին առջև:

—Մեր մասնաւոր տեղեկութեանց համաձայն, Պարոն Գաբրիէլ Զինճիճեան օր երբեք քահանայապետութեամբ կ'ընդունէր, թերթի տնօրէնին դէմ բողոք մը ներկայացուցած է տեղական իշխանութեանց, վերջերս «Փարոս»-ի մէջ երեք անգամ յօդուածի մը առթիւ:

Աղբատանում և Որբախնամ ընկերութեանց խառն Գանձաւարութիւնը հետեւեալին հրատարակութիւնը խնդրած է մենէ, ինչ որ սիրով կը կատարենք:

... Խմբագիր «Փարոս» Լրագիր Աստ

Ճիպսութիւն Մեծապատի Տիար Յովհաննէս Թէրզեան կը հաւանի որ իր և իր եղբարցը վաճառարանին Որբախնամին և Որբախնամի Հրատարակութեան 480 Քր. Ե. յանձնուի խառն Գանձաւարութիւնը սնունդին:

Այս աթիւն հրատարակութեան կուսանք Տիար Յովհաննէս Թէրզեանի նախաձեռնութեամբ ի Ճիպսութի բացուած ծանօթ հանգանակութեան ցանկը:

Տր. Թէրզեան եղբարց	Քր. 500
Ս. Մարտիկ Գեղորոշ	50
Ս. Պօնտուր (Կառավարիչ Ճիպսութի)	40
Ս. Արարեան	40
Ս. Զաւէն Ն. Խաչատուրեան	25
Ս. Արթիւրեան	20
Ս. Պալպալեան	10
Ս. Կարկիսեան	10
Ս. Փափաղեան	5
Ս. Նշան Պ. Խսկիճեան	5
Ս. Չալեան	5
Ս. Ոսկ	5
Ս. Պետեւեան	5
Ս. Կրօն խաչատուրեան	5
Ս. Գաբրիէլ Յովհաննէսեան (Ապիսէն)	4 80
Ս. Աւետիս Պօրոնեան	4 80
Ս. Յակոբ Յովհաննէսեան	2
Տիկ. Նարեկէի Թէրզեան	8 40
Ս. Մարտիկ Յովհաննէսեան (Ապիսէն)	5
	750

Հովը ապակիները կոտրած էր, խոնաւութիւնը փականքները ժանգոտած և հիւսնածները անդերոնու խախտած էր. բան մը նորոգուած, բան մը վերցուած ու փոխուած չէր. բան տարի առաջ Գահիրէին փութանակի կանչուած եւրոպացի գործատուները ապրանքը ինչ վիճակի մէջ օր ձգած էին, նոյն վիճակի մէջ կը գտնուէր այսօր, ինչպէս որ շինուածի իր օգործակ վեհութեանը մէջ:

Ահա հոս եկած էր ինչպէս ամառուան երեկոյ մը, հետը չէրքէզ պատու գերի մը իրեն պէս, և երկու հապէզ գերուհիներ:

Ասոնց երեքն ալ բողոքովին անձնուէր էին անոր. Մայր բրէնսէնէն այն շնորհ խնդրած էր որ հետը ասան զանոնք, և ան ալ, թշնամի մը բովին հեռացնելու ուրախ, առանց դժուարութեան հաւանութիւն տուած էր անոր փափաքին:

ԲԱՇԽՈՒՄ

Արաբկիր Սրբաշնորհ զրկուած Քր. 250
Որբախնամի արտօնութիւնը իր գրքի արժէք 50
Գանձաւարութիւնը սնունդին յատկացուած 450
Գումար Քր. 750

Գանձաւարութիւնը յանուն որբերու իր շնորհակալութիւնը կը յայտնէ ազնիւ նուիրատուներուն, մասնաւորապէս Թէրզեան բարեգութեամբ եղբարց, որոնք ուրիշ առիթներով ևս գործնականապէս արտայայտած են իրենց աղքատասիրական ու որբախնամական զգացումները:

Ի դիմաց խառն Գանձաւարութիւնը Աւետապետ Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ Ն. Մ. ԱՂԱԶԱՐՄ

Տ Ե Ղ Ա Ն Ա Ն

Ն. Բ. Խոսիլը՝ ընկերակցութեամբ իր եղբոր Բրէնտ Մուհամմէտ Ալիի, շաբաթ իրիկուն միջնաբերդի մզկիթը գնաց մեծ Մուհամմէտ Ալիի գերեզմանին վրայ աղօթելու համար:

—Հաւանականօրէն Մուսթաֆա պէյ Մահմէտ Սուլէյման կառավարիչը, Պէնի-Սուլէյմանի միտքի պիտի կարգուի:

—Հանրային պարտուց սնունդը 10,000 ոսկի ևս յանձնած է Հանրօգուտ Երեսօթեանց նախարարութեան, Գահիրէի կոյտիներու շինութիւնները աւարտելու համար:

—Աղբատանը կառավարիչը Մահմուտ փաշա Սուրբի, Գանձաւարութեան 14-րդ պաշտօնէն պիտի բաշտի Շէքի պաշայի յաջորդելու համար Տօմէններու վարչութեան մէջ:

—Երմուսեան Նախարարութիւնը, ամսոյս 14-էն սկսեալ Զնեց Նեղոսի վրայ նաւարկութեան աւարտեց:

—Ն. Վ. Պօղոս փաշա Նուպար այսօր Աղբատանը կ'ապաստուի, Մարտիկի եկող Մուսթաֆայի շոգնուածով:

—Պայուսի տարեկան տօնաւաճառը, Եպան ամսուն 84 և 16 տեղի պիտի ունենայ:

—Վերջացող 48 ժամուան մէջ ժանտախտի որակ գէպը չէ պատահած, ամբողջ Եգիպտոսի մէջ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՐԻՉ, 9 Նոյեմբ. —Դուրը համակերպեցաւ Ֆրանսայի պահանջներուն՝ այս վերջինը պատասխանած է թէ՛ ծովակալ Գաբաւ Միսիրլիէն պիտի բաշտի Սուլթան:

Ջերմեք բերդը նաւակէն երբ իջան, կիները իրենց բնակարանին մեղմազնու տըրութեան հանգէլ շուրաւ մնացին: Ինչպէս մասնաւոր, իր բողոք ջանքերուն ի գերեկ ելլալը տեսնելով, պահ մը մնաց ու, ժամափ՝ այն անողորմելի ճակատագրին առջև որ իր ծրագրերը կը ծաղկէր, իշխանութեան և երջանկութեան իր անուրջները կը ջախջախէր:

Եւ իր ճակտած սրտին խորքն, բովանդակ իր վերաւոր եւթնէն ահալի զայրոյթ մը կը բարձրանար ծանր ծանր... Խուլ, անաղբորուն և համբերատար ատեղութիւն մը այն ատեղի հակառակորդին դէմ որ այս բարոյականը իրեն կը պատճառէր:

Ընդարձակ դաշտին մէջ, արեւ մարր կը մանէր, ու բողոքովին կաներկութեան միմոզաներու պրակի մը ետին, որ այսպէս

նին իրատէն հրատարակուելու պէս, Բայց նաւարարութիւնը մօտակալ տեղ մը պիտի սպասէ մինչեւ որ համաձայնութիւնը գործնական սկզբնաւորութիւն մը ունենայ: (Ռ)

ԲԷՔԻՆ, 9 Նոյեմբ. —Ուրիշ գործակատարին հետ ունեցած մէկ փոխութիւնը անտարբեր փոխադրուած ըլլալ էր թուի Լի-Հունի-Չանի մահը: Մահուորիի զաւնադրութեան շտաբագրուելը արդիւնք է Ճարմի Զինու վրայ բանեցուցած ճիշման: (Ռ)

ԼՈՆՏՈՆ, 9 Նոյեմբ. —Կիտհոլի մէջ, Լորտ Սոլգալիի ճառ մը արտասանելով ըսած է թէ՛ ուրախակի է տեսնել որ աշխարհի իսկապագութիւնը շատ քիչ վրդովուած է:

Միջերկրականի վրայ ստատուող ամպը շուտ փարատեցաւ: Եթէ ասիկէ 50 տարի առաջ այս գէպը պատահէր, ասանկ թեթեւ հետք մը չէր որ պիտի թողար: Օրուան էն կարեւր խնդիրը Հարաւային Աֆրիկէի պատերազմէն: Լորտ Սոլգալիի կրէ թէ այս մասին անհոգ յեռաւորութիւն մը պարզապէս պայանելի է: Այս պատերազմին առթիւ չլազրկութիւնը պէտք է վերագրել տեսակ մը անգիտութեան որով շատեր չեն կրնար բացատրել մեր ձեռնարկած պատերազմին տեսակը:

Ստեպ տեսնուած է պոլիսի պատերազմներ (guerrilla) որ կարծուածէն շատ աւելի երկար ժամանակ տևած են: Լորտ Սոլգալիի կը յայտարարէ թէ անկարելի է իւրեն անցած զարձաքին վրայ հրապարակաւ խօսիլ: Բայց կը հաւատաւ թէ ամեն ամիս և նոյն իսկ շաբթէ շաբաթ Անգլիական բանակը յառաւորութիւններ ընելու վրայ է: Յետոյ նախարարապետը կը ջրէ այն դաժմարը որով կառավարութիւնը կամբաստանուի թէ գործակալներուն փափաքները կատարելու մէջ մեղսութեամբ կը վարուի: Մեր բաղադրականութիւնը, կրտէ Լորտ Սոլգալիի, չի փոխուիր: Մենք ուրիշ բան չենք փափաքիր բայց եթէ քիչ ժամանակուան մէջ տեսնել մեր գրաւած երկիրներու ազատութեան և «ինքնակառավարութեան» բոլոր առաւելութիւնները վայելելու: Պօլսեանք ինքնիշխանութիւնը չի կրնար մեր ապահովութեան հետ համաձայնել: Անգլիական միտքը զրաւ է արգիլել որ ասանկ սոսկալի պատերազմ մը նորէն ծագի: Կայսրութեան այս կողմէն անհետացնելու է որակ վտանգ և ազգը պէտք է գիտնայ թէ իր շահերը սերտ կերպով կապուած են այս բաղադրականութեան յաջողութեան հետ: (Ռ)

ԲԱՐԻՉ, 9 Նոյեմբ. —Ֆրանսական թեր-

թերը շատ գոհունակութիւն կը ցուցնեն Ֆրանսո-թերական միջպէպին կարգադրութեան համար, բայց շատերը Բ. Դանէն ըսելը երաշխաւորութիւններ կը պահանջեն: (Ռ)

ԲԱՐԻՉ, 10 Նոյեմբ. —Սուլթանը ընդունեց Ֆրանսայի գրած բոլոր պայմանները: Պ. Տէրապէս գեղարք Բ. Դանն օր Ֆրանսան պիտի վերահաստատէ դիւանագիտական յարաբերութիւնները: Գայիտո ծովակալը հրաման ստացաւ Միսիրլիէն մեկնելու:

Հաւանական է որ Գայիտոն նաւարարութիւնը Սիրա բաշտի և ժամանակ մը յունական ջուրերուն մէջ մնայ: Վախճան նաւազ միայն ցամաք հանց. կղզիին կառավարիչը բողոքագիր մը գրեց ծովակալին և կոտի տեղի շտաբ: Համար հեռացուց 500 հոգիէ բաղկացած պահակազօրքը: (Ռ)

ՍԷՆ ԲԷՐԵՐՍՊՈՒՐԿ, 10 Նոյեմբ. —Սիւպերիական և Մահալաթիական երկաթուղիները իրարու միացնող գիծը բացուած է: (Ռ)

ԲԱՐԻՉ, 10 Նոյեմբ. —Սուլթանը իրատեղ մը ընդունած ըլլալով Ֆրանսայի պահանջները, Գայիտո ծովակալին նաւարարութիւնը Միսիրլիէն մեկնեցաւ:

Պ. Գոնսլան, Կ. Պոլիս կը վերադառնայ: (Հ)

Կ. ՊՈԼԻՍ, 10 Նոյեմբ. —Մեծ Եպարզութիւն Բիֆթ փաշա մեռաւ: (Ռ)

ՏԵՂԵՆ Ե. Ա. ԱՐՍԼԱՆՅԱՆ ԴԵՐՁԱԿՈՒՅԻ

Քաղաքիս մէջ ծանօթ այս գերաւորէին պատու ունի ծանուցանելու իր բազմաթիւ յաճախորդներուն ինչպէս նաև յարգու հասարակութեան թէ՛ այս անգամ իր Պապ-Է-Լուիս արքային փոխարքած է Պապ-Է-Հաթիտ փողոց Տէպպալէի նստաշէն տան մէջ, առաջին յարկ թիւ 3 արարթամանը:

1—10

Ա Ձ Դ

ՏԵՂԵՆ ՏԵՐՈՒՅԻ ԳԱԼԵՏԵՐ ՓԼԵՏԵՐՄԱՃԵՄԸ, արեւելեան և եւրոպական երաժշտութեան մասնազէտ, Պոլսէն այս անգամ Գահիրէ եկած ըլլալով, պատրաստ է դաշնակի դասեր տալ, նորապիսի մէթոտով, իրեն գիտող աշակերտաց:

Փափաքողները պէտք է դիմեն Տիար Ս. Մահարեանի գլխաւորեալը, Պապ-Է-Հաթիտ փողոց թիւ 31:

5—20

Վերջին անգամ, ու գետնին երեսէն զանգաղ թռչնող մը կ'անցնէին ցիւրեր՝ ոտը ստիչներ արձակելով:

Բնակարանին մօտ եգիպտացորենի արտ մը խաւարուտ դաշտ մը կը յորինէր. նոյն ինքն ապարանքը, բառակուսի և գորշ իր յորինուածին մէջ, լայնածաւալ գերեզման մը իր թուէր, և Նեղոսը, աւելի անդին, միջին գոյն մը կը գրեցար, ու իր գուշակ ուր միայն այն զոյգութեամբ որ կը բխէր իր խորունկ ջուրերէն որոնց մէջ արդէն կը ցոլանային առաջին աստղերը:

Գետը հերկուած հողերէն զատող գետեկերը ձեռքնող նեղ արահետին մէջէն երկու գոմէշներ անցան, վախ, նիհար, առաջ նորոգուած կիւսակով փոքրիկ աղջիկ մը, որ շատ անուշ ձայնով մը պէտէլիի երգ մը կ'երգէր օդակալ եղանակով մը. իրենց գիւմաստները սկսող խաւարին մէջ անշաւ, փեղի համեմատութիւններ կ'անէին՝ այլանդակ ձեւերով հողին վրայ երկարաձգելով:

Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵՐԵԱՆ

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ — ԳԱՀԻՐԷ, ԱԹԱՊՈՒՆԷԼ-ԻՍՏՐԱ, ՆԱԽԻԿԻ ԶԱՊԹԻՑԷԻ ՇԷՆԲԻՆ ԴԷՄ

Մ Ո Ւ Զ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ֆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒ-ԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՅԱՐ ՖՐԱՆԻ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւններ կը զո ծագրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, գնական դրամագրութիւն, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒԶՈՒԱՆ ԼԱՅՖԻ սակագինը և ապահովագրութեան զանազան գրութիւնները շուտով մի ապահովագրութիւն — Առաւելածն պայմաններ
Տեղեկութեանց համար գիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԻՆ, Ընդհ. ներկայացուցիչը:
Աղբքանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալուտար. Գ. ԵԿԱՆՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՖՐԱՆԻ

ԳՐԵՏԻ ԼԻՕՆԵՆԻ ԵՆԳԻՊՈՍ

ԱՂԵՔԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՒ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ Կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ֆրանսայի և ծառայ երկրներու վրայ կ'ստանայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եզրագրոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած գրանցներուն փոխարէն կ'անխորշ պայմանաւժանվ մեղհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՄ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բերեա, Իզմիր, Միսիլի եւ Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբքանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգեանները Բի-

րէա հանգիպելուն, Աթէք պոյցել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՄ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոս-Սայիտ, Եսֆա, Հայֆա, Պէլլուս, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնտէրլէ:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբքանդրիա ամեն Շոբեքշաբթի առաւօտեան ժամը 6ին: Տասնըհինգ օրը անգամ յընթերցել կարձիք

Ծովու հեռեկալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԵՅՏԱ, ՍՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանց համար գիմել Ընկերութեան Աղբքանդրիոյ, Բոս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Բուքի ամեն մասնաճիւղերուն:

1—1902

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՃԱԲԱՑՈՒՆ ԺԱՄԱՑՈՑԻ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԷՆԵՐՈՒ

ԼԵՒԶԻՐԷ, Մուսի փողոց,

Ս. և Ս. Սիսնաիի վաճառատան դէմը

Ապրանաց զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական Փոնօկրաֆներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու արամագրութեան տակ կը գտնուի:

ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՂ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ԱՐԾԱԹ

ՅԱՅԱՆ

ԲԱՐԻՋ

1900



ՄԱՆՑ

ԿԻՆԵՐՈՒ

ԵՒ

ՏՂԱՑՈՑ ՀԱՄԱՐ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

ԸՅՑ ԿԵՐԶԻ ՆՈՐԱՑԵՒՈՒԹԵԱՆ

ՁԱՓԱԽՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ



ԱՂԵՔԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԵԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԽՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՄԵՂ ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻԶՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ

Հեռեկալ նոր և առաջնակարգ շոգեաններով

ԱՆԲԸՐԷՐ ՆԻՔՕԼԱ. տրղթ. թօն. 5500	2ԻԽԱՅՈՅ տարողութիւն թօն 5500
ՐԷՆ ՕԼԿԱ. " " 5500	2ԱՐ " " 5500

ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ Կանոնաւոր մեկնում Աղբքանդրիայէն դէպ ի ՌՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅՄ, ՊԷՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻԶՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԳԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ Աղբքանդրիա, Բիքրասլու փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատուած խորվական Հրամանագրով 25 Յունվար 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի գումար " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մանաճիւղեր.

Աղբքանդրիա, Մանսուրա, Խարթում, Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՅՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՐՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ամեն ճաշէ վերջ ՐԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն աղբքանդրիայէն մէյնէլ քիչ առնել:

ՐԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աղբքային գեղերու նման չի խանգարել ստամբուլը:

Կը ծախուի ամեն մեծ դեղաբաններու մէջ:

13—316